Ասեց.—Ես գինամ դու Խանդուլթ խանում.մի աբով կ'երթաս, հմա Խանդուլթ խանում իմ ճրկրլթի բարայ չ'էղնի։

Ու Դաւիթին խաբեց, տարաւ ուր տուն. կերան, խմեցին ու էլան մէկ տեղ քնան։

Մնաց. լուսուն Դաւիթ փոշմընաւ ուր բռնած բանից—էդ ի՞նչ բան էր ես բռնեցի, պդի մըր ազգ չ'խաբուէր, ես յո՞րի խաբուայ մէկ օլուշաղի աբով։

Ու ձին քաշեց ու հեծաւ. քշեց ուր ձին ու գնաց։

Զմլկեր սուլթան ասեց.—Դու եաւաշ, էկար ընձի խաբեցիր ու թողիր, գացիր։

Ու ինադ ընկաւ։

Դաւիթ գնաց, գուլթնի մի ռաստ էկաւ[1]. բարև տուեց։ Ընդո՞ւք լէ Դաւթի բարևն առան։

Ասեց.—Ախպրտան, իդա տաւար յարձրկէք, մեխք ին։

Ու յարձրկեցին տաւար, էրեցին դէն։

Մանչկալին ասեց թէ՝—Արի դու գուլթնի մանչ բռնէ։

Մանչկալ էկաւ, բռնեց մանչ։

Դաւիթ լէ բռնեց գուլթնի խարզնի գլոխ՝ եօթ փաթ ձիով պտոտեց։

Էդ գուլթնի մարդկանց մօտէն մէկն ասեց, ուր հունարն է. մէկէլն ասեց՝ ուր հունար չէ, ձիու հունարն է։

Դաւիթ ձիուց իջաւ. եօթ փաթ լէ ինք մինակ պտոտեց. դարձաւ հեծաւ ուր ձին ու շնորակալ էղաւ ըդընցնէ ու պդի էրթէր։ Մանչկալն ասեց.—Մ'էրթայ, գուլթնի հացն էկաւ, հաց ուտինք, նոր Աստուած քու բան աջողայ, գնա։

Ու Դաւիթ ձիուց իջաւ մէկէլ, ու ձին թորկեց արձրլու,

---

[1]) Ա. վարիանտով Դաւիթ գուլթանին պատահելուց առաջ պատահում է Բաղդրդու խալֆին, որ Դաւթի նման իւր նշանածը բերելու էր գնում. պայման են կապում, եթէ մէկին տղայ լինի, միւսին աղջիկ՝ տան միմեանց։